ԲԱԳՐԵՎԱՆԴ

ԱԼԱՇԿԵՐՏ
ՄԱՆԱՉԿԵՐՏ
ԲԱՂԵՇ

ԱԼԱՇԿԵՐ

1. ՍԻՆԱՄԱՀԱՎՔ

Թագավոր մի կէղնի։ Էտ թագավոր շատ կը հալիվորնա, ձեռաց կէրտա։

Էտոր օնիքիլար կը ժողովին, գիկան կըսին թագավորին.—Քու տղեկներ ճամբա, էրտան անմահութենի խնծոր բերին, կի՛ր, կը ջըհելնաս, կէղնիս յոթ տարեկան տղի պես։

Էտ թագավոր կէղնի գարադումըն իրեք տղա, կը խանչա զուր տղեկներ, կըսա.— Գացե՛ք, ընծի անմահութենի խնծոր բերեք, ուտիմ ու չհելնամ։

Էտ թագավորի տղեկներ գելնին, կառնին զուրանց գուրզ ու քաման, իրեք լե հ՚իբար հետ թարքի գունյա կէղնին, կէրտան։ Կէրտան մեկ հալիվոր բոստնճու ըռաստ գիկան, կըսին.—Թարի լուս, պապե՛։

— Աստծու բարին, դուք բարով-հազաք բարի էկաք, էտ հ՚ո՞ւր կէրտաք իտա հըմլա հ՚իբար հետ։

— Կէրտանք անմահութենի խնծոր բերելու։

— Լաո՛, իտա էղավ հարիր-հ՚իսուն տարի ես իտա տեղն իմ, շատեր էկան գացին, չկրցան զէտ անմահութենի խնծոր բերեն, դո՞ւք պտի բերիք։

— Հ՚ընչի՞, ի՞նչ կա օր չկրնանք բերինք,— ըսին թագավորի տըղեկներ պապեին։

— Լաո՛, էն տեղ յոթ գլխանի դև մի կա, էտ անմահութենի խնծորի ծառին մուղաթ կը կենա։

Էտ անմահութենի ծառ լե, սապախտան օր աղոթրան կը բացվի, էն ծառի ծաղկներ լե կը հասնի, յոթ գլխանի դև էն տեղ հաղրա, կը քաղա, կառնի կէրտա։ Հ'ըմնօր էտ ծառ կը ծաղկի, բար կիտա, հ'ըմնօր էտ դև գիկա, կառնի կէրտա։

Հալիվորի ըսած խոսքեր էտ տղեկներ հ'իմցան, ու մնաս բարով ըսին, թողին, գացին։

Գացին, գացին, շատ ու քիչ՝ աստված դինա, հարի ղէտ անմահութենի խնծորի ծառ գտան, նոր կայնան։ Գացին էտոր բաղճի պատի տակ մեկ տալտա տեղ գտան, նստան։

Մեծ տղեն ըսեց ուր աղբրտոց.— Աղբրտի՛ք, դուք հ'ըսօր քնեք, ես հարի լուս հ'իմաց կը կենամ, օր դև էկավ, ձրզի հ'իմաց կէնիմ, հ'ելնինք անմահութենի խնծոր էտոր ձեռնեն առնինք։

Աղբրտիք քնան, հ'ինք լե հարի լուսու դեմ հ'իմաց մնաց։ Լուսու դեմ էտոր քուն տարավ։ Էտ լե քնավ։ Անմահութենի ծառ ծաղկավ, բար տվեց, դև էկավ առավ, գնաց։

Աղբրտիք հ'իմցան օր, օր էդի կէսօր, ուրանց մեծ աղբեր տեղոստեղ քներ ա։ Նա՛ անմահութենի խնծոր կա, նա՛ բան։

Ձեն կիտան ուրանց աղբոր կը հանին օր, օր էդի կեսօր։

Կըսա.—Վա՜յ, աղբրտանք, քներ իմ, մացիր իմ քնուկ։

Էտ օր լե կընցնի։ Մեկել օր դոր գիկա միջնակ աղբոր։

Միջնակ աղբեր կըսա.—Աղբրտիք, հ'ըսօր դոր իմն ա, դուք քնեք, ես մուղաթ կը կենամ հարի լուս։ Լուսուն ձրզի գիմցում։

Աղբրտանք կը քնին։ Էտ միջնակ աղբեր լե հարի լուսու դեմ մուղաթ կը կենա։ Լուսու դեմ էտոր քուն լե կը տանի։ Էտ լե կը քնի, ծառ կը ծաղկի, զուր բար կիտա։ Դև գիկա, կառնի կէրտա, էտոնք խապար չէդնին։ Մեկ լե հ'աչքեր ուրանց կը բանան, կաչքին օր՝ լուս ա։ Նա՛ անմահութենի խնծոր կա, նա՛ բան։ Ձեն կիտան, աղբեր գելնի, կաչքա օր, օր էդի կեսօր, հալա հ'ինք քներ ա։

Էն մեկել օր, դոր գիկա պզտիկ աղբոր։

Պզտիկ աղբեր էտոց կըսա.— Աղբրտիք, դուք քնեք, ես հ'ըսօր մուղաթ կենամ, տեսնիմ աստված ի՞նչ դուռ մի կը բանա, օր մենք մեր հոր հ'առեջ սև հ'երես չէզնինք։

Աղբրտանք քնան, էտի մուղաթ կեցավ հարի լուսու դեմ։ Լուսու դեմ էտոր քուն տարավ, համա խամեն թալեց, զուր ձեռ կտրեց, աղ լցեց մեջ, տրորեց, մամուռ տվեց էտոր ջիկար, էլ քուն չտարավ։ Աղոթրան դրռ չէր ճըղտրվի, տեսավ օր անմահութենի ծառի ծաղկներ բացվան, քիչ-քիչ ծաղկներ թափան, խնծորներ մեծցան։

Մեկ էլ տեսավ, յոթ գլխանի դև մի, մեկ մռութ էրկինքն ա, մեկ

մռութ դետին ա։ Էկավ օր զէտ խնծորներ էլման տանի։ Էտ տղեն էլ ուր աղբրտանց չիմցուց, համա քաշեց զուր նետ ու անեղ, հ'ելավ գնի հ'առեջ։

Դևն օր էտ տղին տեսավ, ըսեց.—Հա՜յ հա՜յ, հողածի՜ն, օձն ուր պորտով, հավք ուր թևով, իտա տեղ չըր հ'իդե, էտ ի՞մալ էղավ օր դու էկար։ Հազր կեցի, մկա քու ավագ կտոր քու հ'անկանջ կը թողիմ։

Տղեն ըսեց.— Կ'իր, նոր փառք տուր։

Դև իմալ օր գուրզ մի թալեց, տղեն կզավ, գուրզ փըստ հ'ընցավ։ Տղեն իմալ օր զուր նետ ու անեղ թալեց, համա քիսավ դևի սրտի մեջ, պառեկեն դուս տվեց. դև համա յարալի դարձավ փախավ դեմի ուր տուն։ Տղեն լե էտոր հ'ետևեն գնաց, տեսավ օր դև մտավ ծակ մի։ Դարձավ էկավ անմահութենի ծառի մոտ, տեսավ օր ծառի վրեն խնծորներ հասած կախված ին։ Քաղեց լցեց մեկ դաստմալի մեջ, կապեց, բերեց դրեց ուր աղբրտանց գլխու վերև։

Աղբրտանք հ'իմցան օր, օր էղեր էր կեսօր, հալա ուրանք քնած են։ Խնծոր լե քաղած, մեկ մեծ դաստմլի մեջ կապած, ուրանց մոտ դրած ա։ Աղբրտանք ջատ ուրխրցան, հարցուցին պզտիկ աղբոր մոտից.

— Դու դև չտեսա՞ր։

— Տեսա։

— Ապա ի՞մալ էղավ առանց մըզի, կրցար դևի ձեռնեն խընծորներ առար։

Ըստապուն պզտի աղբեր հ'ըմեն բան ըսեց ուր աղբրտոց։ Առավ աղբրտիք ու անմահութենի խնծորներ, գացին դևի ծակի վրեն։

Մեծ աղբեր ըսեց.— Ես կը մտնիմ իտա ծկից։

Միջնակ աղբեր ըսեց.— Ես կը մտնիմ։

Պըզտիկ աղբեր ըսեց.—Աղբրտանք, դու մը՝ մտեք, ես կը մտիմ։ Համա մեկ բան լե ձգի թամբի կէնիմ, ի՜նչ խտըր օր ես կը բոռամ, կըսիմ՝ «Վառա, իրիցա՛ն, դուք ընձի կախեք։

Ձվան կը թալին պզտի աղբոր մեջքեն, խայիմ կը կապին, ու կիջուն ծկից։

Էտ տղեն քանի բոռաց՝ «Ես վառա՜, իրիցա՜ն, աղբրտանք հ'անկանջ չէրին, հ'իջուցին։

Հ'իջավ, գնաց ներս։ Տեսավ օր դև հոգու հետ ա, համա, դև զէտ տղեն օր տեսավ, ջիր վախեցավ, հոգին տվեց։

Տղեն դևի հ'անկջներ կտրեց, թալեց ջեր, ու դուռ բացեց, տեսավ օր, ի՜նչ տեսնի։ Իրեք հատ հուրնիկ-հրեղեն աղջիկ նստած ին, քրկա կէնին։

Աղջկներ օր զէտ տղեն տեսան, ըսին.—Վա՛յ, հողածի՛ն, գլխուտ արևուտ մեռնինք, օձ ուր պորտով, հավք ուր թևով չըկրներ իտա տեղ հ'իկեր։ Էտ ի՞մալ էղավ օր դու էկար։ Մկա յոթ դլխանի դև գիկա, քու ավադ կտոր քու հ'անկաջ կը թողա։ Խոսք հալա աղջըկներու բերան էր, տըղեն հանեց դևի հ'անկջներ, թալեց աղջըկներու հ'առեջ։

Աղջկներ իրեք լե մեկ-մեկ հ'ելան, էտ տղի երսըներ պագին ու շատ օշնեցին, օր ուրանց էտ գարշելի, գազան դևի ձեռնեն պրծուց։

Էտ աղջկներ տարան զէտ տղեն նստըցուցին ուրանց հ'օրթալախ, շատ կեր ու խում էրին, պրծան։

Մեծ աղջիկ ըսեց.— Թագավորի տղա՛, մեր իտա իրեքիս միջից ո՛ր մեկին կը հավնիս, կառնիս։

Թագավորի տըղեն ըսեց.—Դուք լե իրեք իք, մենք լե իրեք ինք. ձեր միջի մեծ՝ կիտամ իմ մեծ աղբոր, միջնեկ՝ իմ միջնեկ աղբոր, պզտիկ լե՝ ընծի։

Համա պզտիկ շատ խորոտ էր։ Էտ աղբեր առավ իրեք քուր լե, բերեց ծակի դեմ, խանչեց ուր աղբրտոց.

— Աղբրտի՛ք, ճոպան կախեք։

Աղբրտանք ճոպան կախեցին։ Բերեց հ'առջև մեծ աղջկա միջքից կապեց, բոռաց.—Մեծ աղբե՛ր, իտա քաշա քըզի։

Էնի քաշին, դուս հանին։

Ճոպան մեկ լե կախեցին, ըս տապուն զմիշնակ աղջիկ հանեցին միջնակ աղբոր։ Իտա հախսի դոր էկավ պզտիկ աղբոր նշանածին, ճոպան կախեցին, էտ աղջիկ ըսեց.— Թագավորի տղա՛, արի՛, դու հ'առեջ հ'ելի, ճոպան կախա, հ'ետև ես գելնիմ։

— Չէ՛, դու պտի հ'առեջ հ'ելնիս,—ըսեց աղջկան։

— Ես գելնիմ, համա ընծի տեսնող՝ էլ քըզի իտա հորեն չհանա։

— Իմ աղբրտիք բեբաղդ չին, աղջի, դու հ'ելի հ'առջև։

Աղջիկ տեսավ օր տըղեն չելնի, ուրին պտի հանա, հանեց քանիմ բալնիք տվեց էտ տղին։

Ըսեց.—Տղա՛, կէրտաս մեկ հ'օդի դուռ կը բանաս, կը տեսնիս օր, օսկի հավ, օսկի կուտ հ'առեջ օսկի սինու մեջ դրած. կը վերցուս հետդի կը տանիս, կէրտաս մեկ հ'օդի դուռ լե կը բանաս, կաչքիս օր մեկ հատ օսկի կատու, օսկի մուկ լե հ'առեջ դրած մեկ օսկե սինու մեջ, էն լե հետդի կը տանիս։ Կէրտաս մեկ հ'օդի դուռ կը բանաս, կաչքիս օր իրեք հատ ձի կա կապած՝ մեկ սև ա, մեկ կարմիր ա, մեկ լե սիվտակ։ Ամեկուն պոչից մեկ մազ կը քաշիս, քու մոտ

կը պահիս։ Ինչ տեղ օր նեղ հ'ընկար, համա ժազին զարկիր, մեկ ձի մի ըռախթով-փուսաթով քու հ'առեջ կը կայնի, ինչ մուրազ օր էրիր, ընտոք կը կատարին։ Կէրտաս մեկ հ'օդի դուռ լե կը բանաս, կաչքիս օր իրեք հատ խոշ խոտ կուտին. մեկ սիվտակ ա, մեկ սև ա, մեկ կարմիր ա։ Քզի հ'առեջ կը թալիս վըր սև խոշուն, սև խոշ կը-թալա վըր կարմիր խոշուն, կարմիր խոշ կըթալա վըր սիվտակ խոշուն, սիվտակ խոշ քըզի կը թալա լուս աշխար։ Ես լե հարիր քառսուն օր քու ճամբեն կաչքիմ, էկար՝ էկար, չէկար՝ վիրն օր տվեցին, էնտոր կառնիմ։

Աղջիկ էդ խրատներ տվեց տղին ու ճոպան կապեց ուր միջքեն, դուս էկավ։ Աղբրտանք աղջկան օր տեսան, խելքեր ուրանց գնաց։ Էդտեղ ուրանց միտք փոխին էրկուս լե, օր տուպարե մի խաղան ուրանց պզտի աղբոր գլոխ, օր էդ աղջիկ մնա ուրանց։

Ճոպան կախեցին, պզտիկ աղբեր կապեց ուր մեջք, հարի կես բաշեցին, կիսեն հետ վերեն խամեն թալեցին, ճոպան կտրին, տղեն լըրը՛մբ հ'ընկավ գետին, խելք գնաց։ Էտ աղբրտանք առան աղջիկներ ու անմահութենի խնծորներ, գացին։

Գացին հասան ուրանց հոր քաղաք։ Զեն գնաց թագավորին՝ թե.

— Քու տղեկներ էկան, անմահութենի խնծոր ու իրեք լե աղջիկ ուրանց հետ բերին։

Թագավոր շատ ուրխըցավ, հ'ելավ ուրին ինչ խըտըր նազիր, վոզիր կեր, հ'ըմեն ճամբեց ուր տղեկներու հ'առջև։ Բերեց հ'իշուց։ Տղեկներ էկան ուրանց հոր ձեռ պաքին, խնծոր մի տվեցին, կերավ թը չէ, էղավ յոթ տարեկան տղի պես։

Ու դառցավ ուր տղեկներուց հարցուց.—Տղա՛, լաո՛, առանց զիանի՞ գացիք, էկա՞ք։

— Փա՞ռք ասսու, մենք առանց զիանի էկանք, համա, դև մեր պզտիկ աղբոր սպանեց։

Թագավոր փչում վախտ լաց։ Հ'ետև նազիր վոզիր էկան, սիրտ տվին, էլ չլաց։

Թագավոր բերեց քառսուն օր, քառսուն գիշեր դհոլ-զուռնա գարկեց, ուր տղեկներ ուրանց բերած աղջկներու վրեն պսակեց։

Խանչեց զէն պզտիկ աղջիկ օր պսակեր ուր վրեն, աղջիկ չպըսակվավ, ըսեց.

— Քառսուն օր ընծի մոֆուլ տուր։ Քառսուն օր օր թմավ, նոր կը պսակվիմ։

Թագավոր ըսեց.— Թող քու խոսք էղնի։

Մկա դառնանք թագավորի պզտիկ տղին, որ հ'ընկավ մնաց հորու մեջ, մութ աշխար։

Ճոպան կտրելու վախտ էտ տղի խելք սհաթ մի՝ էրկուս գլխից էրթած կէղնի։ Էրկու սհաթից հ'ետև, խելք գիկա գլուխ։ Գելնի որ հ'ինք էտ հորու մեջ հ'ընկեր ա, նա՛ մարդ կա, նա՛ մատատ։ Փոռ-փոշման կէրտա էտ աղջկա ըսած դուռ կը բանա, կը տեսնի որ, աղջկա ըսածի պես, ոսկի հավ, ոսկի կուտ հ'առեջ, ոսկի սինու մեջ դրած ա։ Կը վերցու, կը գնա ուր ծոց։ Էլման գելնի էտ տեղից, կէրտա, մեկել հ'օդի դուռ կը բանա, կաչքա որ ոսկի կատուն, ոսկե մուկ ոսկե սինու մեջ դրած ա, էտ լե կը վերցու, կը գնա ծոց։ Էդ տեղեն լե կէրտա մեկ հ'օդի դուռ կը բանա, կաչքա, որ իրեք ձի կա, մեկ սև ա, մեկ սիվտակ ա, մեկ կարմիր ա, հմալ խորոտ ին, որ մարդ կուզա չուտա, չխմա՝ մինակ էտ ձիաններուն թամաշա էնա։

Էտ ձիաններու ամեկու պոչից լե մեկ-մեկ մազ քաշեց, դրեց ծոց, դուս էկավ։

Գնաց խոշերու հ'օդի դուռ բացեց։ Տեսավ որ իրեք հատ խոշ կա, մեկ սև ա, մեկ կարմիր, մեկ սիվտակ։

Էտ տղեն աղջկա ըսած ոսյաթ մոռցեր էր։ Ուրին հ'առեջ պտի թալեր վըր սև խոշուն, որ սև թալեր վըր կարմրին, կարմիր թալեր վըր սիվտակին, սիվտակ՝ տղին կըթալեր լուս աշխար։

Տղեն շաշմավ։ Ուրին թալեց հ'առեջ վըր սիվտըկին, սիվտակ թալեց վըր կարմրին, կարմիր թալեց վըր սևին, սև թալեց էտ տղին, գնաց մութ աշխար։

Գնաց մեկ մեծ քաղքի մի դեմ առավ, գնաց էտ քաղքի մեջ մեկ պառվու էղավ խոնախ։ Շատ ծառավ էր, էտ տղեն էտ պառվուց մեկ ջուր մի հ'ուզեց, ջուր չկեր որ պառավ տղին տեր։ Էտ պառվուն մեկ պզտիկ թոռ մի կեր, գնաց ընտոր շոցուց, ուր թոռի ջեռ բերեց թասի մեջ լցեց, տվեց էտ տղեն խմեց։ Խմեց պրծավ տեսավ որ շատ մուռտալ հոտ գիկեր մոտեն։ Դառցավ պառվուց հարցուց.

— Նա՛նե։

Պառավ ըսեց.— Ջա՛նե։

— Քըզնե մեկ բան հարցում, ձեր իտա ջրից հ'ընչի՞ իտա հըմ-լա մուռտալ հոտ գիկա։

— Թաո՜ւ, գլխուդ-արևուդ մեռնիմ, քաջ վիշապ էկի, ջրի դեմ առի, ջուր կտրեր ա, չթորկա հ'իգա, կըսա՝ «Հարի որ թագավորի աղջիկ չբերիք, տաք ընծի, ես ուտիմ, ձըղի ջուր չի տամ»։ Հ'ըսոր էղավ տաս որ, որ քաղքի ջուր կտրեր ա, ջուր չկա, մարդիկ հ'իբար կերան, քաղաք հ'իրար անցում էղավ, հ'ըմեն ժողվան, գացին թա-

գավորի մոտ, ըսեցին. «Աղջիկա՛։ մեռնի աղե՞կ ա, թե՞ քու ժողովուրդս. անճաղ կոցան թագավորին խելք հասկցուցին, մկա պտիտանին աղջիկ տան վիշապին, օր նոր վիշապ ջուր թողա գա։

Պառավ օր ուր խոսք կտրեց, տղեն ըսեց.— Նանե՛, մուղաթ կեցի, եբօր թագավորի աղջիկ պտի տանին վիշապին տան, դու ընծի հ՚իմաց տու։

Պառավ ըսեց.—Աղեկ կէղնի։

Տղեն գլուխ գրեց, փշում քնավ։ Պառավ էկավ, տղին ձեն տվեց.

—Հ՚ելի,—ըսեց,—տղա՛, թագավորի աղջիկ առան, գացին, օր տան վիշապին։

Էտ տղեն հ՚ելավ, զուր թուր կապեց վրեն, գուրզ ու քաման թալեց թև, հ՚ընկավ թագավորի աղջիկ տանողներու հ՚ետև, գնաց։

Էն մարգիք օր թագավորի աղջիկ տարան, զթագավորի աղջկա ոտ ու ձեռ կապին, դրեցին վիշապից հեռուն, ու ուրանք թողին հ՚ետդարձան քաղաք։

Էտ տղեն ջոկվավ, մեկ տալտա տեղ մի տափավ։ Տեսավ օր վիշապ էն դհեն էկավ, գոռն-օրոտուն հ՚ընկի էրկինք գետինք։

Վիշապ էկավ, թագավորի աղջկան մոտեցավ, էրեց օր բերան բաներ, կլուցեր, էտ տղեն տափուկ տեղից հ՚ելավ վիշապի դեմ, բոռաց.

— Է՚ վիշա՛պ, անաստվա՛ծ վիշապ, էտ ի՞նչ խիղճա քու իիղճ, օր դու անմեղք մարդիկ կուտիս, քու թատպիր տե՛ս, յա, էն ա աստված ընծի կիտա, յա էն ա՝ քրզի՛։

Տղեն էտ հրմալ ըսեց ու քշեց վիշապի վրեն, վիշապ լե քշեց տղի վրեն։ Բերան բացեց օր կլուցեր, տղեն քաշեց, գրզով զարկեց վիշապի բերնի միջից, գնաց, մտավ թոքերու մեջ, պատռեց փոր, մտավ գետին, համա քաշեց թուր, վիշապին կտոր-կտոր էրեց, դիզեց հ՚իրարու վրեն։

Գնաց թագավորի աղջկա ոտ ու ձեռ հ՚արձկեց, ըսեց.—Հ՚ելի, գնա՛ քու հոր տուն, իմալ տեսար, հմալ խրսա էրա։

Աղջիկ վազավ, գնաց քաղաք, հավար թալեց թե՝ «Մարդու մեկ, վիշապ սպանեց, ջրի հ՚առեջ բացեց, ընծի ազատեց»։

Էտ խապար կը տանին կիտան թագավորին, կըսին.—Թագավոր ապրած, մարդու մեկ վիշապին սպաներ ա, ջրի հ՚առեջ բացեր ա, քու աղջիկ ազատեր ա, հանտա առանք էկանք։

Էտ բան օր թագավոր հ՚իմցավ, շատ ուրխրցավ, ու հրամանտվեց, վիշապին սպանող տղին գտնին, բերին։

Ինչ խրտրը օր քաղքի մեջ մարդ կեր, թե խարիպական, թե եռ-

լու, հ'ըմեն բերին թագավորի աղջկա հ'աչքի հ'առջևեն հ'նցուցին, ըսեց. «Վիշապ ըսպանող մարդ էտոնց մեշ չկա»։ Հ'ետև սալըխ տվեցին թե՝ ֆըլան պառվու տուն մեկ խարիպական կա, էն մինակ չէկեր ա, թե՝ չէ քաղաք հ'ըմեն հ'ուտա ին։

Գացին պառվու տնից ալէն տղեն բերին։ Աղջիկ տեսնելու պես, ըսեց.

— Ի՛տա տղեն ա, թե օր չըք ավտնա, ես իմ ձեռ թաթխեր իմ վիշապի արնի մեշ, գողտու զարկեր իմ էտ տղի մեջքին։ Շորերու վրեն բացե՛ք աչքեք։

Բացին, տեսան օր օղորդ, մեկ ձեռի տեղ արուն կպած կեր էտ տղի միջքի վրեն։

Առան էտ տղին տարան թագավորի մոտ, թագավոր հարցուց.

— Դու հ'ու՞սա իս, ժի՛ր տղա։

— Ես լուս աշխարքեն իմ։

— Ապա հ'որի՞նիս էկի հ'ուտա։

Էտ տղեն ուր գլխու էկած հ'ըմեն ըսեց թագավորին... ու խընդրեց, ուրին հանա լուս աշխար։

Թագավոր տղին ըսեց.— Ես քըզի չըմ կռնա հանի լուս աշխար։ Խոզի իմ թագավորուտեն հ'ուզեր, ես կիտենք քըզի, թաքիլան էտ չատին բան ընծի չըսեր, օր ես քու էրած բարուտենից ամչցա։ Դու կիմ քաղաք, զիմ ժողովուրդ աղատիր էտ գարշելի վիշապի ձեռքեն, օր տարին տըսվերկու ամիս կը քաշենք էտ վիշապի ձեռ։ Շատ բանմ՝ ալու ընձնե չուզիր, համա, ի՞նչ էնիմ, օր իմ ձեռնեն չիգա, էտ ճար մնաց մեկ Սինամահավքին։ Քըզի կը ճամբիմ էնտոր մոտ, համա ընծի մեկ խնտրված մի կա, օր դու չկռնաս գլուխ բերիս, ուրիշներ չբերին։

— Ի՞նչ ա քու խնտրված, թագավոր ապրած կենա։

— Իմ խնտրված են ա օր, էս էղավ վաթսուն տարի, թագավորի լայեղ մեկ քոշք ու սարե մի կը շինիմ, կը պրծիմ, ընծի-ընծի կըսիմ, էլ իտա հըմլա քոշք ու սարա աշխրի հ'ետես մարդու չկա։ Մեկ դավրեշ գիկա, կըսա. «Աղե՛կ ա, աղե՛կ ա, համա մեկ բան ա պակաս» ու կը թողա կէրտա։ Կը քանդիմ էլման կըշինիմ, օր էտ դավրեշ գա անուն չգնա։ Դավրեշ գիկա, անուն կը դնա, կէրտա։ Իտա էղավ վաթսուն տարի, իմ հալն ու էտ դավրեշի՝ էտ ա էղի։

Տղեն դառցավ թագավորից հարցուց.

— Է՛, ի՞նչ կըսա էտ դավրեշ, օր անուն կը դնա։

— Կըսա. «Թա՛գավոր, քու քոշք ու սարեն աղեկ ա, համա ափսո՛ս օր Հազարաբիլբուլի պատքեր չըս քաշերի վըր քու քոշք ու

սարին». ու կըսա՝ «Մեկ մի ճամբա թըխ էրթա, Հազարաբիլբուլ բերա, դիր քու քոշք ու սարի մեջ, էնի ճըլվըլա, դու հ'անկաջ էրա»։ Մկա Հազարաբիլբուլ չկա, օր աեսնինք, էնաոր պատքեր քաշինք պատի վրեն, ու մեկ լե չկա օր էտ Հազարաբիլբուլ բերա։ Դու օր ըեբիս, նոր քու իզին կիտամ, օր էրթաս, քըզի կը տանիմ Սինամահավքի մոտ, էնի քըզի կըհանա լուս աշխար։

Տղեն տեսավ օր էլ ուրիշ ճար չկա, թագավորից հարցուց.

— Թագավոր ապրած մնա, դու էտ Հազարաբիլբուլի տեղ գինա՞ս։

— Չէ՞, լա՛ո, օր ես գինենք, մկա հազար հաղ բերել տվեր ենք։

Էտ տղեն դուշուրմիշ էղավ, ըսեց.— Կէրթամ բերիմ։

Էն մեկել օր էտ տղեն հ'ելավ ուր նետ ու անեղ թալեց ուր թև, խանչեց զուր աստված, հ'ընկավ ճամբախ։

Շատ գնաց թե քիչ, հասավ մեկ պաղ հ'աղբրի մոտ, նստավ, փշում ջուր խմեց, հաց կերավ, դառցավ քիչ մի վերև աչքեց, տեսավ օր էտ տեղից իրեք ճամբա կը ճվտըվի հ'իրարուց, քարի մի վրեն գրած. «Էտ ճամբու բաժին գրած ա, որն օր կարդա, հասկնա՝ աջ կողմի ճամբով էրթըցող՝ գիկա, մեջտեղի ճամբով էրթըցող՝ յա դա, յա չիգա, ձախ կողմի ճամբով էրթըցող ըսկի չիգա»։

Էտ տղեն էր, գիր կարդաց, ջիվրավ մնաց։ Էտ տեղ քուն տարավ, գլուխ դրեց քարի տակ ու քնավ։ Քնած տեղ էրազ մի տեսավ։ Դավրեշի խլըղով մարդ մի էկավ, ուրին ըսեց. «Է՞յ, հողա՞ծին, շատ դեմ մ'առնի, աստված օղորմած ա, հ'ելի, բռնա իտա մեջտեղի ճամբեն, գնա։ Քիչ մի գացիր թե չէ, քըզի մեկ դևի քոշք ու սարե մի հ'ըռաստ գիկա. կէրթաս կը մտնիս էն քոշք ու սարեն, կաչքիս օր քառսուն գլխանի դևի մեր նըստի՝ հաց կը թխա, ուր ծծեր թալի հ'ետևանց, ծծերից մեկ կառնիս քու բերան, կը ծծիս։ Էնի օր հաց թխեց, պրծավ, քըզնե կը հարցու. «Հողածին, հ'ուզա՝ տամ», դու ըսա. «Խնդրեմ, քու տղեն դնիս ընծի հետ, էրթանք, Հազարաբիլբուլ բերինք»։ Էնի քառսուն գլխանի դև կը դնա քու հետ, քըզի շատ տեղերից կազատա։ Կէրտաք, կառնեք Հազարաբիլբուլ, գիկաք»։

Տղեն թռավ քնած տեղից, հ'ելավ, տեսավ օր էրազ էր, համա դավրեշի ըսած թամբեք ուր միտ պայեց, հ'ելավ բռնեց էն հ'որթըլխի ճամբախ ու գնաց հասավ մեկ բանձր քոշք ու սարե մի, նես մտավ, տեսավ օր օղորդմա դևի մեր նըստի՝ հաց կը թխա, ծծեր հ'ետևանց թալուկ ա։ Վազավ, ծծերուց մեկ առավ բերան, ծծեց։

Դևի մեր հաց թխեց, պրծավ, դառցավ հարցուց.

— Հ'ուզա՛, տամ, հողածին։

— Իմ հ՝ուզած էն ա, օր դու քու քառսուն գլխանի տղեն դնիս իմ հետ, էրթանք Հազարաբիլբուլ բերինք։

Դևի մեր ըսեց.—Գնա, նստի քըզի փշում հաց բերիմ, կիր հարի հ՝իրկուն։ Հ՝իրկուն իմ տղեն նեճիրի տեղից գիկա, ընտոր կըսիմ, քու հետ գա, էրտաք Հազարաբիլբուլ բերելու։

Հ՝իրկուն օր էղավ, տղեն մեկ հ՝երկեն գերան գլխե գլոխ՝ արջու, խոզու, գիլու ջանտակ շարեր էր, էկավ տուն։ Համա դռնից նես մտավ, ուր մոր ըսեց.—Մարդու հո՞տ գիկա։

Մեր ըսեց.— Մարդ մի էկեր ա, իմ հաց թխելու վախտ ծիծսի առեր ա բերան։ Էն լե քըզի պես տղա ս. էղի, քանի օր իմ կաթ կերավ, էրկուստի էղաք աղբեր հ՝իրարու։ Ես քըզնե մունաթ կէնիմ, էտ հողածին մարդու հետ էրտաս Հազարաբիլբուլ բերելու, քանի օր էնի էկեր ա, ուրին թալեր ա մըր օջաղ։

Էտ քառսուն գլխանի դև ուր մամու խոսքին լսեց։ Սապախտան հ՝ելավ, առավ զուր գուրզ ու քամանն։ Էտ տղեն լե հետ առավ, գացին Հազարաբիլբուլ բերելու։

Շատ գացին թե քիչ, հասան քառսուն աղբրտանց դևեսներու քոշք ու սարի մոտ։ Էտ քառսուն աղբրտանց մոտեն մեկ խարավուլ կը քաշեր, տեսավ օր քառսուն գլխանի դև մեկ մարդու հետ գիկեր դեմի ուրանց քոշք ու սարեն, հմալ մեկ գլխանց բո՞ռաց, օր էրկինք-գետինք դնտաց։

Էտ դևի աղբրտիք, որն օր տունն էր, տնից դուս էկան, որն օր գնացեր էր նեճիր, նեճիրի տեղից էկան, ժողվան հ՝իրարու վրեն, առան ուրանց գուրզ ու քամանն, հ՝ելան էտ քառսուն գլխանի դևի դեմ, գուրզ ու քամանով թալին հ՝իրար։

Էտ քառսուն աղբրտիք զարկին քառսուն գլխանի դևին յարալու էրին։ Համա էտ տղեն տեսավ օր դևին յարալու էրին, քաշեց ուր թուր, հ՝ընկավ քառսուն աղբրտանց դևեսներու մեջ։ Համա գլոխ էր օր կը չրատեր։ Արուն հ՝ելավ, ջանդակ գլորեց, մեկ դհեն քառսուն գլխանի դև ջարդեց, մեկ դհեն էտ տղեն։ Էտ քառսուն աղբոր մոտից, մնաց յոթ աղբեր։ Էտ յոթ լե յարալու էրին, հ՝եսիր բռնին։

Գացին մտան էտ դևեսներու տուն։ Ինչ խտըր օր անգին քար կեր էտ դևեսներուն, առան գացին։ Գացին-գացին, հարի հասան Հազարաբիլբուլի դուռ, տեսան օր համա մարդ ա, օր տեղոստեղ քար ա դառցի։ Էտ դևն ա տղին թամպա էրեց, ըսեց.

— Օր Հազարաբիլբուլի մաջուղ դուս էկավ, մըզի հետ ինչ օր ըրուցեց, դու չէղնի ջուհապ տաս, օր ջուհապ տաս, մենք լե իտա մարդիկներու պես քար կը դառնանք։ Օր ձեն չը հանիս, էնի տե-

ղոստեղ կը պատռի, իտա քարեղեն մարդիկ լե կը սաղնան, մենք լե կառնինք Հազարաբիլբուլ, կէրտանք։

Գացին, ներս մտան Հազարաբիլբուլի սրախ, Հազարաբիլբուլի մաշուղ դուս էկավ, ինչ օր զրուցեց, էտոք ջուհապ չտվեցին։ Հազար թավուր լեզու թափեց, էտոք ըսկի ջուհապ չտվեցին, համա տեզոստեղ պատռավ։ Ինչ խտըր օր մարդ էր քարըցի, հ'ըմեն սաղցան, էտ սհաթին փառք տվեցին աստծուն։

Էտ դեն ու տղեն մտան Հազարաբիլբուլի մոտ, տեսան օր մեկ խորոտ հավքմ' էր, խաֆասի մեշ դրած՝ վերցուցին բերին։ Էն քարցած մարդիկ օր տեսան էտոք Հազարաբիլբուլ առան, դուս հ'ելան, վազեցին դևի վրեն օր Հազարաբիլբուլ ձեռնեն խլեն։ Դև ամեն մեկին մեկ-մեկ ճլոտ զարկեց, թողին փախան, հեռեցան։

Դեն ու տղեն առան Հազարաբիլբուլ ու ուր մնացած մեկ մաշուղ էկան։ Մեկ օր լե էտ տղին դև չթողեց, ուր տուն պայեց, էն մեկել օր ճամբու դրեց գնաց։

Էտ տղեն տարավ Հազարաբիլբուլ ու ուր մաշուղ հասցուց թագավորի քաղաք։ Տարավ տվեց թագավորին։ Թագավոր շատ ուրխրցավ, հ'ելավ էտ տղի հ'երեսներ պագեց, տարավ ուր կշտի հետ գրեց։

Առան գացին։ Հազարաբիլբուլ դրեցին թագավորի շինած նոր քոշք ու սարի մեջ։ Հազարաբիլբուլի մաշուղ էկավ կայնավ, Հազարաբիլբուլի դեմ, ըսեց.—Խոսա՛, Հազարաբիլբուլ, խոսա՛։

Էտ Հազարաբիլբուլ ուր բերան բացեց, հազար թուռլու լիզու թափեց, օր սար ու քար լացին էտոր ձինեն։

Օր մի մնաց, էն մեկել օր տղեն էկավ թագավորի մոտ, ըսեց.

— Թագավոր ապրած մնա, իմ վախտեն էկավ կը թըմի, իմ սիրական իմ ձեռնեն կէրտա, կռնա՞ս ընծի շուտով հանա լուս աշխար։

Թագավոր ըսեց.— Ես քըզի ըսի, Սինամահավք մինակ քըզի կռնա հանա լուս աշխար, համա էնտոր լե պտի ուր նեղուտեննեն ազատիս, օր քըզի օգնա։

— Էտ Սինամահավքի նեղուտեն ի՞նչ ա,—ըսեց տղեն։

Թագավոր ըսեց.—Էտ Սինամահավք տաս տարին մեկ հաղ ձագ կը հանա, մեկ վիշապ մի կա, գիկա, էտոր ձագեր կուտա։ Ինչ կէնա՛-չէնա, չկռնա էտ վիշապին սպանա, օր ուր ձագեր ազատա էտ վիշապի ձեռնեն։

— Հ'ըստարի ձագ հանե՞ր ա,—հարցուց տղեն։

— Հա, հ'ըստարի ընտոր տարին ա։ Աղեկ վախտ մի հ'ըռաստ

էկեր իս,—ըսեց թագավոր,—կէրտաս ծառի տակ կը պառկիս, էտ Սինամահավքի խասյաթ էտ ա, օր չորս օր մեկ հաղ գիկա ուր ձագերուն կը տեսնի, կերակուլ կիտա, կէրտա։ Պետք ա գու պառկիս ծառի տակ, մուղաթ կենաս, տեսնիս եր վիշապ գիկա, հ'ելնիս, հ'իրար հետ կռվիք։ Ցա դու էնտոր կը հաղթիս, յա էնի քըզի կուտա։

Էտ տղեն հ'ելավ առավ ուր էղած-չէղած, գնաց Սինամահավքի մոտ։ Շատ գնաց թե քիչ, հասավ էն ծառի տակ, օր Սինամահավք բուն էր դրի։ Գնաց ուր շե ու շալաք դրեց ծառի տակ։ Քիչ մի քնավ, մեկ էլ տեսավ օր խրժվըրտոց հ'ընկավ Սինամահավքի ձագերու մեջ։ Համա էտ տղեն քաշեց զուր թուրն ու հ'ելավ, տեսավ օր վիշապ էն դհեն բերան բացի, գիկա օր հ'ելնի ծառնուվի, զէտ ձագեր ուտա։

Տղեն քշեց, վիշապի հ'առեշ կտրեց, թուր մի թալեց վիշապին, գլխու կես տարավ, վիշապ ուր պոչ թալեց, էտ տղի մեջք փաթեց, ճըխտեց զկողեր հ'իրարու վրեն, օր տղի մեջք չարդեր, տղեն թրով խաթ-խաթ կտրտեց, վիշապին դիզեց հ'իրարու վրեն, էղավ մեկ մեծ կոլոմի ու կը պառկի ծառի տակ, կը քնի։

Սինամահավք ուր ձագերու խրժվըրտոց հեռուն աշխարքից լսեց, գիցավ օր վիշապն ա էկավ ուտելու, համա սուրութման էկավ, էրեց օր զարկեր էտ մարդուն կտոր-կտոր էներ, գիներ թե էտ մարդն էր հ'ըմեն հաղ ուր ձագեր տանող։ Համա ձագեր վըժվըժացին. «Ցամա՜ն, քու աստծու սիրուն էղնի, էտ մարդուն մը զարկի, էտ էր մըզի ազատող վիշապի ձեռնեն, հալա աչքա վիշապի ջանդակ օր բրդի, դիզեր ա հ'իրար վրեն»։

Ձագեր օր էտ հմալ ըսեցին ուրանց մոր, մեր զթևեր բռնեց արևու դեմ, հով էրեց էտ տղի վրեն։ Տղեն կուշտ քնավ, հ'ելավ տեսավ օր Սինամահավք էկեր ա, ուր վրեն հով ա էրի, հ'ելավ կայնավ։

Սինամահավք ըսեց.—Տըղա՜, հ'ո՜ւզա, տամ։

Տղեն ըսեց.—Ընծի հանա լուս աշխար։

— Վա՜յ քու սորվըցնողի վիզ կոտրի։ Իտա պառավ վախտս ա, ես ի՞նչ կռնամ քըզի շալկիմ, հանիմ լուս աշխար։

— Ապա ի՜մալ էնիմ,—ըսեց տղեն,—իմ հուս վերև աստուծն ա, ներքև դու իս, դո՜ւ գինաս։

— Օր հըմալ ա,— ըսեց Սինամահավք,— գնա քառսուն լիտր գինի բիր, քառսուն լիտր լե դմակ։ Ես օր «հա՜» կէնիմ, դմակ թալա

բերանսի, օր «ղու» կէնիմ, գինի թալա բերանսի, հարի քըզի հանիմ լուս աշխար։

Էա տեղից տղեն դառցավ, էկավ թագավորի մոտ։ Առավ քառասուն լիտր գինի, քառասուն լիտր դմակ, գնաց։

Բերեց ուր շե ու շալաք։ Էտ դմակն ու գինին առավ, հ'ելավ նստավ Սինամահավքի պառեկի վրեն։ Սինամահավք էտոր առավ, հավալամիշ էղավ, «Հա՛» էրեց, դմակ թալեց բերան, «ղո՛ւ» էրեց՝ գինի լըցրեց բերան, հ'ելան։ Քիչ մնաց օր հ'ելնեն լուս աշխար, դմակ իըլսավ, էտ հավք մեկ լե օր «հա՛» էրեց, դմակ չկեր, համա գանակ թալեց զուր թութկի միս կտրեց, թալեց էտ Սինամահավքի բերան։ Սինամահավք զիցավ օր էտի մարդու միս էր, չկերավ, լիզվի տակ պահեց։

Հ'ելան լուս աշխար։ Սինամահավք էտ տղին հ'իշուց դետին, ըսեց.— Գնա՛։ Տեսավ օր տղեն չըր կոներ քելեր, կը թոփլտեր։ Խանչեց ուր մոտ տղին, ըսեց.— Հ'ընչի՞ կը թոփլաս։

Տղեն ըսեց.— Ոտս ի կոմեր ա նստելով, էտոր համար կը թոփլամ։

Սինամահավք ըսեց.— Դու սութ կըսիս, քու մսից կտրիր, թալիր իմ բերան, ես հասկցա, օր իսնի միս էր, չկերա, իմ լիզվի տակ պահեցի։

Հանեց լիզվի տակից միս, դրեց տնդոստնդ, ուր հ'աչքի արտասունքից փշում քսեց վրեն, սաղցավ տղի յարեն։

Շնորակալութեն առավ Սինամահավք, դառցավ ուր ճամբով։

Էտ տղեն լե բարակ ճամբե մի բռնեց ու գնաց։ Գնաց մեկ հովվի մի հ'ըռաստ էկավ, ըսեց.—Հովիվ աղբեր, ես իմ շորեր կիտամ քըզի, դու քու շորեր տուր ընծի։

Հովիվ ուրախ-ուրախ ուր շորեր հանեց, տվեց էտ տղին, տղի շորեր լե առավ ուրին։

Տղեն հանեց քանիմ ղուրուշ փարա տվեց, հովվու մոտից մեկ գառ առավ, մորթեց, միսն ու փոսթ տվեց հովվին, փոր շորցուց էցքեց ուր գլուխ, էղավ մեկ քաչլիկ մի, շալկեց ուր շե ու շալաք, գնաց։

Գնաց հասավ ուր քաղքի մոտիկ, գնաց մեկ բոստնճու մոտ ըսեց.

— Ընծի չը՞ս բռնի քու հ'առեշ խզմաթչի։

Բոստնճին ըսեց.—Հ'ընչի չէ, քու հախ ընծի ըսա։

Էտ տղեն ըսեց.— Իմ հախ ի՛նչ օր տվեցիր, դու քու իսաֆ։

Էտ տղեն բոստնճու հետ ուր հախ կտրեց, էղավ բոստնճուն խզմաթշի։

Էրկօր մնաց, իրեք դիանդա, տեսավ օր գմփրտուն ղքաղաք վերցուց։

Էտ տղեն էկավ ուր աղից հարցուց։

— Աղա՛, իտա ի՞նչ գմփրտուն ա քաղքի մեջ։

Աղեն ըսեց.— Մեր թագավորի տղեկներ գացին անմահութենի խնծոր բերին, տվեցին, թագավոր կերավ, չհելցավ. իրեք հատ լե խորոտ աղջիկ են բերած. էրկուս պսակեցին աղբրտանք ուրանց վրեն։ Պզտի աղջիկ լե պըտի պսակեն վըր թագավորին։ Քառսուն օր վատա յա կտրի, օր պսակվի։ Ծուսուն ու յոթ օր գնաց, մնաց իրեք օր։ Հ'ըսօր էտ թագավորին առնող աղջիկ ըսեր ա օր ջրինտ խաղան հարի իրեք օր։ Իրեք օրեն հ'ետև ըսեր ա՝ «Մեկ քանիմ բաներ լե կա, կըսիմ, օր կատարիք, նոր կը պսակվիմ թագավորի վրեն»։

Փշում մացին էտ խոսքի վրեն, տղեն մեկ լե տեսավ, օր կէղնի հազար ձիավոր հեծած, էտ աղջկա նստած քոչք ու սարի փանճարի դեմ ջրինտ կը խաղան։

Հ'ելավ, ուրին քաշեց թահնա, իմալ օր սիվտակ ձիու պոչի մազ ճըրընկցուց, գախին սիվտակ ձին հազր ուր մոտ կայնավ, մեկ ձեռք լե հագնելու խաս ջոր վրեն։

Էտ տըղեն համա շուտ ուր շորեր փոխեց, հ'ելավ հեծավ ձիուն, գնաց խառնվավ էտ ջրինտ խաղացող ձիավորներուն։ Համա աղեկ ջրինտ խաղցավ, օր էտ քաղքի ջենլիկ հ'ըմեն աճեպ կտրան։ Քշեց էկավ աղջկա նստած փանճարի հ'առջևեն հ'ընցավ, աղջիկ օր տեսավ ձիուն ու տղին, էն սհաթ ճանչցավ, ուր մտքի մեջ ըսեց՝ «Աստըված ընծի իմ մուրազին հասցուց, վալա՛ տղեն էկեր ա»։

Տղեն գնաց, ձիուց հ'իջավ, ձին թորկեց, գնաց ուր տեղ, ու հ'ինք լե գնաց բոստան։

Էն մեկել օր էլման ձիավորներ հեծան, ջրինտ կը խաղեն։ Էտ տղեն ուրին քաշեց թահնա սև ձիու պոչի մազ ճըրընկցուց, մեկ էլ ս·եսավ, սև ձին ըռախտով-փուսաթով ուր հ'առջ կայնավ։ Շուտ ուր շորեր փոխեց, հ'ելավ հեծավ ձիուն, գնաց մտավ ձիավորներու մեջ, հըմալ ջրինտ խաղցավ, օր հ'ըմեն աճեպ կտրան էտ տղի ջրինտ խաղալու վրեն։

Էլման քշեց աղջկա նստած փանճարի հ'առջևից, գնաց, մեկ թայնա տեղ հ'իջավ, ձին թորկեց, գնաց ուր տեղ, հ'ինք լե գնաց բոստան։

Իրեք օրվա վրեն էլման ժողվան ձիավորներ ջրինտ խաղցան, էտ տղեն ուրին քաշեց թահնա։ Կարմիր ձիու պոչի մազին ճըրընկցուց, կարմիր ձին էտոր հ'առեջ կայնավ։ Էտ տղեն ուր շորեր փոխեց, հ'ելավ, հեծավ, գնաց ձիավորներու մեջ, հմալ աղեկ ջրինտ խաղցավ, օր էտ քաղքի շենլիկ հ'ըմեն աճեպ կտրան։ Քշեց աղջկա փանճարի հ'առջևեն գնաց։ Հ'իջավ, ձին թորկեց, գնաց, հ'ինք լե էկավ բոստան ուր բանին էղավ։

Աղջկա քառսուն օր թմավ։ Թագավոր մարդ ճամբեց մոտ, ըսեց.— Արի՛ պսակվինք։

— Ջըմ պսակվի,— ըսեց աղջիկ։

— Հ'որի չպսակվի,— ըսեց թագավոր,— հալա գնա՛, հարցու։

Գացին աղջկան ըսեցին.—Թագավոր կըսա հ'որի՞ չպսակվի։

Աղջիկ ըսեց.—Ընծի իրեք հատ թամպի կա։ Եբօր թագավոր կատարեց, նոր կը պսակվիմ։

Էկան թագավորին ըսեցին.—Աղջիկ կըսա. «Ընծի իրեք թամպա կա, թագավոր եբօր կատարեց, նոր կը պսակվիմ»։

Թագավոր ըսեց.— Գացե՛ք հարցուցեք, տեսեք ի՞նչ կըսա, արե՛ք ընծի ըսեք։

Էկան աղջկան ըսին.— Թագավոր կըսա, ուր թամպին ի՛նչ ա, Բրխ ըսա։

Աղջիկ ըսեց.— Թագավորից գուզիմ մեկ օսկի հավ, օսկի կուտ հ'առեջ՝ մեկ օսկի սինու մեջ դրած։ Գուզիմ մեկ օսկի կատու, օսկի մուկ՝ օսկի սինու մեջ դրած։ Էտոք օր բերեց պրծավ, պետք ա բերա հըմալ հեքեաթ ըսող մի, օր խամտան մեկ հեքեաթ ըսա, ուր քաղքի մեծ ու պզտիկ ժողվա, օր հ'անկանջ էնին։ Եբօր էդ իմ թամպեք կատարեց, նոր կը պսակվիմ։

Աղջկա՝ ըսած խոսքեր ու թամպիք, էկան թագավորին ըսին։

Թագավոր էն սհաթ ուր քաղքի մեջ ինչ խտըբ օր օսկերիչ կեր, գըմեն խանչեց ուր մոտ, ըսեց.— Կէրտաք, կը շինիք՝ մեկ օսկի սինի, օսկի սինու մեջ կը չինիք մեկ օսկի կատու՝ օսկի մուկ հ'առեջ։ Էլման կըշինիք մեկ օսկի սինի, օսկի սինու մեջ կը չինիք մեկ օսկի հավ՝ օսկի կուտ հ'առեջ։

Թագավորի էտ ըսածներ ըսկի մեկ օսկերիչ չը կրցավ շինեց։ Թագավորի իլաճ կտրավ, դալալ տվեց խանչել. «Որն-օր թագավորի ըսած օսկի ամարաթներ, թագավորի նոր խանըմի ըսածի պես շինեց, թագավոր էնտոր ուր ծանտրուեթենով օսկի կիտա՞»։

Ըսկի մեկ մարդ մի էդ կայեն քաղքի միջից հ'առեջ չէկավ։ Էտ բոստանճի տղեն էկավ դալալի հ'առեջ, ըսեց.— Թագավորի ըսածներ

ես կը շինիմ, մինակ ընծի մեկ բեռ գուզ տա ամեն մեկ գիշեր, քանի օր էդ շինելուց չպրծեր իմ։

Դալալչին էկավ թագավորին ըսեց.—Ֆըլան բոստնճու մոտի մարդ ըսեց ես կը շինիմ, համա ամեն մեկ գիշեր մեկ բեռ գուզ ընծի տա, քանի օր չպրծեր իմ շինելուց։

Թագավոր ըսեց.— Շատ ազեկ, տարեք, մեկ բեռ գուզ տվեք, իրեք չորս գունտ լե օսկի էն բոստնճուն՝ թը՛խ շինա։

Առան գացին գունտ-գունտ օսկիք ու մեկ բեռ գուզ տվին էտ տղին։

Սապախտան հ՚ելավ ուր մոտի օսկի կատուն, օսկի մուկ, օսկի հավ, օսկի կուտ ու օսկի սինիք ճամբեց թագավորին։ Թագավոր լե ճամբեց աղչկան։

Աղչիկ օր տեսավ, էն սհաթ ճանչըցավ օր ուրանց ապրանքն ա, «ր հ՚ինք թամպի էրեց... տղին, տղեն լե բերեր ա։

Էն մեկել օր աղչիկ ըսեց.—Կէրթաք ընծի մեկ հեքեաթ ըսող մի կը բերիք, ու քաղքի մեծ պզտիկ կը ժողվիք օր հ՚անկանչ դնին էն հեքեաթ ըսողին։ Եբօր հեքեաթ պրծավ, ես նոր կառնիմ թագավորին։

Էտ աղչկա ըսած խոսքեր հ՚ըմեն էկան, թագավորին ըսին։ Թագավոր հ՚ելավ դալալ խանչել տվեց, ըսեց.— Որն օր գա խամտան մեկ հեքեաթ ըսա, թագավորի նոր բերած խանըմըն հավնավ, թագավոր էնդոր ուր կշըռանոցով օսկի կիտա՞։

Էտ բոստնճի տղեն էկավ դալալին ըսեց.— Ես շատ ազեկ հեքեաթ ըսել գինամ։

Դալալ էտոր ձեռնեն բռնեց, տարավ թագավորի մոտ։ Թագավոր դալալ տվեց խանչել. ըսեց.— Ինչ խտըր օր քաղաք մարդ կա, պետք ա գա թագավորի սարային օր հեքեաթ ըսողին հ՚անկանչ դընին։

Էտ քաղքի մեծ ու պզտիկ հ՚ըմեն էկան թագավորի սարային։

Թագավոր խանչեց էտ տղին, ըսեց օր ուր հեքեաթ ըսա։

Էտ տըղեն ըսեց։— Թագավոր ապրած մնա, վախտի մեկին ըռընճբրի մեկ ըսկի ժառանկ չունենա։ Մեկ օր էտ ըռընճբար կէրտա ուր հ՚արտ վարելու, կը հերսոտի ուր լծած էղան, կըսա. «Մուռտա՛լ», աստծու հրամանքով էտ եզ լիզու գելնի, ըռընճբրին կըսա. «Մուռտալ մենք չի՛նք, մուռտալ իսան ա, օր նա՛ ժուկ գինա, նա՛ օամանակ, հ՚ըմեն հաղ մեղք կէնա։ Օր կը մեռնի, կը տանին հողի տակ կը հորին, համա մենք օր կը հիվնդանք, մըզի կը մորթին, ուտին, զմըր կաշին լե կը հագնին։ Դու օր քու վախտ հ՚իմնաս, էր

տաս քու դոշակ, քու կնիկ աստծու խասու խուտրատով կը պառկի, մեկ տղե մի կը բերա, համա քու էտ տըղեն լե շատ գիտնակ տղա կէղնի»։ Ըրընճբաբ աճեպ կը մնա, օր եղ մարդու պես կը զրուցա։ Էլ մեկ տարի թամամ ուր դոշակ չէրտա։ Տարին օր թմավ, էտ էղան ըսած օր, էտ մարդ կէրտա ուր դոշակ, էտ մարդու կնիկ կը փորովնա։ Աստծու հրամանքով կը պառկի, ուր վախտին, մեկ շատ հ'իմաստուն տղե մի կը բերա։

Էտ տղեն կէղնի վեց-յոթ տարեկան, մեկ օր մի գելնի, հ'արտ ուր հոր հաց կը տանի։ Պապ կը նստի օր հաց ուտա, տղեն հոր թեվեն կը բռնա, կըսա. «Մուտի»։ Պապ կըսա. «Հ'ընչի չուտիմ»։

Կըսա.— Մըղի ղոնախ գիկա։

Մեկ լե կաչքա, կը տեսնի օր իրեք ձիավոր էն դհեն հ'ելան, էկան դեմի ուրանց, էկան բարև տվին։ Էտ պզտիկ տղեն զէտոց բարև առավ։ Էտ ձիավորներ հարցուցին.—Ի՞նչ կա, ի՛նչ չկա աշխար։

Էտ տղեն ըսեց.—Ինչ օր կա, ձըր մոտն ա, մարդ չը դինա։

Էտ ձիավորներ լե Ատամաթ թագավորի աղջիկն էր ճամբի էրկրներ ժուռ գալու։ Ու էնդոնց լե թամպա էրեր էր, ըսեր էր. «Ալամ աշխար ժուռ գիկաք, հ'ըռաստ գալող մարդուց կը հարցուք, թե աշխար ի՞նչ կա, ի՞նչ չկա, որն օր ձըր ջուհապ տվեց թե. «Ինչ օր կա ձըր մոտն ա». էն մարդու ձեռնեն բռնիք բերիք, ես էնտոր սիրտ ու թոք ուտիմ՝ օր չմեռնիմ»։

Էտ ձիավորներ տեսան օր թագավորի աղջկա էրած թամպի ջուապ էտ պզտիկ տղեն տվեց, էտ տղի թևեն բռնին, տարան թագավորին։

Էտ տղի պապ լաց, հ'ընկավ հ'ետևներեն, տղեն դառցավ ուր հոր սիրտ տվեց, ըսեց. «Ափո՛, մի՛ լա, մի՛ լա, ես վաղ մեկել օր կը դառնամ, ընծի բան չէղնի, դու ըսկի մը՛ վախենա»։

Պապ թողեց դառցավ, էտ ձիավորներ առան զէտ տղեն ու գացին։ Տարան տվեցին Ատամաթ թագավորին։

Ատամաթ թագավոր էտ տղին զրուցք տվեց, շատ հավնավ, էր չխիմիջաց մեկից տեր ուր աղջկա ձեռ, օր մորթեր։ Տվեց ուր սատրիազամին, ըսեց.

«Տար զիտա տղեն պահա, հալա տեսնիմ իմ աղջիկ ի՞նչ կըսա»։

Սատրիազամ առավ տղին, գնաց ուր տուն։ Էտ տղեն սատրիազամին ըսեց. «Իմ տեր, հ'ըւօր ձըր քաղքի մեջ մեկ պզտիկ տղեմ ի մեռավ, տարան հորեցին, արի, թը՛ կէղնի, իմ արև ընծի

բաշխա, մեկ օր մի ես լե քըզի պետք գիկամ, մարդ ճամբա թըխ էրտան էն նոր մեռած տըղեն գերեզմընեն հանին, էնտոր սիրտ ու թոք հանին, բերին, տան թագավորի աղջիկ ուտա, օր ուր ձեռ իմ յախից թողա»։

Սատրիազամ էտ տղի խոսքին հ'անկանջ էրեց։ Հ'ելավ մարդ ճամբեց, գացին էն մեռած տղի սիրտ ու թոք բերին։ Տարան տվեցին թագավորի աղջիկ կերավ։

Էն մեկել օր սատրիազամ թողեց էտ պզտիկ տըղեն, գնաց ուրանց տուն։

Ժուկ մի հ'ընցավ էտ արալըղ։ Մեկ օր թագավորի թոռճին իրեք հատ չատ խորոտիկ ձուկ բերեց թագավորին փեշքեշ։ Թագավոր լե հ'ելավ, ճամբեց ուր աղջըկան։ Աղջիկ ձկներուն ետ ճամբեց, էկավ թագավորին ըսեց.

«Էտ ձկներու մեջ որձ ձուկ կա, ես կուս աղջիկ ու հարի մեռնելու օր պըտի կուս մնամ։ Ես որձեղենի միս պըտի չուտիմ, որձ իսնի հոտ ըիլա իմ քիթ չքիսնի պըտի»։

Թագավոր չատ դուշուրմիշ էղավ ուր աղջկա ըսած խոսքերու վրեն։ Աստծու խաս ու խուտրատով ձկներուց մեկ հ'ելավ լիղու, թագավորին ըսեց. «Որձը ուր մոտն ա, էգը ուր մոտն ա» ու թըռավ թագավորի հ'առջևից, փանճարի միջով հ'ընկավ ծով։

Թագավոր էն սհաթ կը խանչա զուր սատրիազամին, կըսա. «Յա ձկան ըսած ջուապ ընծի կիտաս, յա լե չէ, քու գլոխ կը ղարկիմ»։

Սատրիազամ կը մնա ջիվար։ Հինգ օր վատա կը կըտրա, եբոր զէտ ջուապ չտվեց, նոր թագավոր զուր գլոխ զարկա։

Սատրիազամ գիկա ուր տուն։ ջուտ կը ճամբա էտ տղի հ'ետևեն, կառնի տղեն, գիկա։

Էն մեկել օր սատրիազամ տղին կը տանի կը հանա թագավորի հ'երես։

Էտ տղեն իրեք հատ առակով կը հասկցու թագավորին ձկան ըսած խոսքեր։

Տղեն կըսա՝ «Թագավոր ապրած մնա, վախտի մեկին մարդ մի կէղնի, էտ մարդու կնիկ ինչ խտըր կը պառկի, էրեխա կը բերա, վիշապ մի ուր տան հ'առկեն գողտու գիշներ, էտ մարդու էրեխեն շրոցի մեջ կը խեղտեր, ու էլման կը քաշվեր հ'առիկ, կը պահվեր։ Մեկ օր մի եբոր մարդ ու կնիկ տուն չէզնին, էտ վիշապ հ'առկեն կախ գընկնի օր հ'իշնի քնած տեղ օրորոցի մեջ էտ էրեխին խեղտա։ Էտ տան տիրոջ մեկ պզտիկ բոճի շուն կէղնի։ Էտ սհաթուն

էտ բոճին օրորոցի տակ պառկուկ կէղնի։ Վիշապի հ'իշնելու խըշ-պրուտոց կը լսա, գելնի կաշքա, օր վիշապ հ'առկից հ'իջավ, էկավ ուր պոչ փաթեր օրորոցի մեջ էրեխի վգով, օր խեղտեր, համա էտ բոճին հ'ելավ, ուր հ'ակոռներով վիշապի պոչ կտրտեց։ Վիշապն ու բոճին կուվտան, բոճին վիշապին խեղտեց, էրեխին աղատեց։ Քիչ մի մնաց, տան տեր էկավ, դուռ բացեց։ Բոճին արնվա հ'ելավ ուր տիրոջ հ'առեջ։

Տեր ըսեց. «Վա՜յ, հ'ըմեն հաղ իտա բոճին ա օր զմբր էրեխեք կը խեղտա, մենք ֆարաղ խապար չունինք»։ Կը ղարկա, բոճուն կը սպանա։ Գիկա կը մտնի տուն, կաշքա օր օրորոցի մոտ մեկ մեծ վիշապի ջանգակ կա, էն սհաթ հասկցավ օր վիշապ հ'իջի ուր էրեխին խեղտա, բոճին վիշապին կտրտեր ա, էրեխեն աղատեր ա։

«Թագավոր ապրած մնա, ի՞նչ խտբր ցավ էղավ էն բոճու տիրուն, օր ուր խելացի շուն սպանեց»։

«Շատ ցավ էղավ»—ըսեց թագավոր։

«Էն էրկու առակ թըխ մնա, հ'իրկուն կըսիմ», տղեն ըսեց թագավորին ու «Ջըզի գիշեր բաբի» ըսեց, առավ սատրիազամին, գնաց։

Էն մեկել հ'իրկուն թագավոր էլման խանչեց, էտ տղին բերեց։ Էտ տղեն իտա հաղուս մեկել առակ ըսեց.

«Վախտի մեկին մեկ իշխան մարդ մի կէղնի, գելնի կառնի զուր բազեն, կէրտա սար օր նեճիր էնա։ Շատ կը ծառվընա, կէրտա մեկ մեծ քարի տակ, ձիով կը կայնի, կաշքա օր էտ քարափի հ'երեսեն կաթիլ-կաթիլ ջուր կը կաթա։ Էտ իշխան ջեպից կը հանաօսկի ջրխմիչ, կիտա էտ կաթիլ ջրի դեմ։ Կը բերբա օր խմա, ուր ձեռաց բազեն կըտցով կը զարկա, կը թափա, չը թողա օր էտ իշխան խմա էտ ջուր։ Իշխան մեկ լե ջրխմիչ կիտա էտ կաթիլ ջրի դեմ, կէնա օր էտ ջուր խմա, բազեն կը զարկա, կը թափա։ Հըմա իշխան ինատ կէնա, կը վերցու բաղին, կիտա քարին, բազեն տեղոստեղ կը սատկի։ Իշխան ուրին ուրին տուշուրմիջ կէղնի, կըսա։—Ջա՛նըմ, ես հ'ո՞րի ամեղ տեղ զարկի զիմ բազեն սպանեցի, բալկի՛ մեկ բան կեր էտ ջրի մեջ, օր բազեն չըթորկեր ես խմենք, հալա ես պըտի հ'ելնիմ քարի գլոխ, աչքիմ տեսնիմ էտ ջուր հ'ուստի՞ գիկա»։

Գելնի քարի գլոխ, կաշքա օր մեկ մեծ վիշապ մի փիցեր ա, արև զարկի վըրեն, էտոր ճենճն ա օր կը հալի գիկա, էտ քարից կը թափի կաթ-կաթ։ Նոր կը զարկա չոքերուն՝ «Ախ, կըսա, իմ հ'աշքեր քոռնա, իմ բազեն գիներ օր օձու արուն էր, ես պտի խմենք,

մեռնենք, զարկեց իմ ձեռնեն թափեց, ես հ'ընչի՞ զարկեցի քարին, սպանեցի բազին»։

— Ի՞նչ խտրպ ցավ տվեց էտ բազեն, թագավոր ապրած մնա։

— Շատ ցավ տվեց,— ըսեց թագավոր։

Էտ գիշեր էտ տղեն թագավորից իզին առավ օր վաղ հ'իրկուն լե գա, զմեկել առակ ըսա։

«Ձրզի գիշեր բարի» ըսեց, առավ սատրիազամ, գնաց։

Էն մեկել հ'իրկուն էտ տղեն ու սատրիազամ էլման հ'ելան, գացին թագավորի մոտ։ Էտ տղեն մեկել առակ ըսեց.

«Վախտի մեկին մեկ թագավոր մի կէղնի, Հնտստանու էտ թագավորին մեկ Սինամահավք փեշքեշ կը բերին։ Էտ թագավոր յոթ տարի զէտ հավք կը պահա ուր խաս-բաղճեն։ Էտ հավք ըսկի չը զրուցա։ Օր մի թագավոր գելնի ուր բաղճեն կը զըվրռնա, փարվեզ կիտա, կէրթա, գիկա։ Մեկ էլ կը տեսնի՝ էտ հավք ուրին-ուրին կը ծիծղա, թագավոր ուրնից կը խրտնի, կը դառնա էտ հավքի վրեն կը հեռոտի, կըսա. «Մուռտա՛լ, իտա յոթ տարի գու հ'ուստ իս, չը ծիծղե, հ'ըսօր իմ վրեն ծիծղացիր»։ Աստծու հրամանքով էտ Սինամահավք լիզու հ'ելավ, թագավորին ըսեց. «Թագավոր ապրած մնա, ես քու վրեն խոմ չծիծղացի»։

Թագավոր ըսեց. «Ապա վի՞ր վրեն ծիծղացիր»։

Էտ հավք ըսեց. «Հ'ըսօր իմ աղբոր աղի հարսնիքն էր, էնտոնք էնտեղ իմ կենաց գինի խմեցին, ես հուտա հ'իմցա, էտոր համար ծիծղացի»։

Թագավոր ըսեց. «Օր ես քըզի թողիմ, էրթաս քու աղբոր հարսնիք, ընծի ի՞նչ փեշքեշ պըտի բերիս»։

Հավք ըսեց. «Քըզի մեկ անմահութենի խնծորի հունտ կը բերիմ, քու բաղճեն տընկիս, մեկ տարի հ'ետև պտուղ կիտա։ Էն պտուղ տված խնծոր օր ուտիս, կը շհելնաս»։

Թագավոր ըսեց. «Օր հմալ ա, դը՛ գնա»։

Էտ հավք գնաց, ուր աղբոր հարսնիք էրեց, պրծավ, մեկ անմահութենի խնծորի հունտ դրեց ուր լիզվի տակ, բերեց թագավորին փեշքեշ։ Թագավոր էտ հունտ տնկեց ուր բաղճի մեջ։ Մեկ տարի հ'ետև պտուղ տվեց, խնծորներ հասան։ Իմալ կէղնի էտ խնծորներուց մեկ օձ կը դեղա։ Էտ դեղած խնծոր էտ թագավորի բաղվանճին կը քաղա, կուտա, համա տեղոստեղ կը մեռնի։

Թագավոր գիկա, կաչքա օր բաղվանճին էտ խնծոր ուտելուց ու մեռի, կը դառնա Սինամահավքին կըսա. «Դու խո իմ դուշման չի՞ս օր խապիր ընծի, իտա ծառ տնկիր իմ բաղճի մեջ, որն օր

էտոր խնծորներ ուտա, մեռնի»։ Հրմա կը քաշա թուր կը զարկա, էտ հավքու վիզ կը կտրա։ Հավք տեղոստեղ կը սատկի։

Թագավոր հրաման կէնա էտ ծառ կը կտրեն, բաղճի միջեն կը հանեն, կը տանեն չոլ մեկ դուզ տեղ մի կը թալին։

Էտ քաղքին մեկ հալիվոր նախրճի կէղնի, հ՚ինքն ու ուր կնիկ ոմալ կը տանին արծելու։ Կէրտան էտ չոլ տեղ էտ ծառին ու խնծորներուն հ՚ըռաստ ղիկան, ամեկ մեկ հատ կուտին, էրկուս լե կը ջհելնան, կէղնին տասնուհինգ տարեկան թուրվանտաղ ջհել։

Էն նախրճին ու ուր կնիկ հ՚իրարու կըսին. «Քաղինք իտա խընծորներուց, տանինք մեր թագավոր ուտա, մըղի քըչում փարա կիտա»։

Կը քաղին էտ խնծորներուց, կը բերին, կիտան թագավորին։ Թագավոր ուտելու պես կը ջհելնա, կէղնի տասն ու հինգ տարեկան։ Էն սհաթ թագավոր կը խանչա էտ նախրճին, ուր կնիկ, կըսա. «Էտ խնծոր հ՚ուստի՞ բերիք»։

Նախրճին ու ուր կնիկ կըսին. «Ըշտա, ֆլան տեղ մեկ ծառ թալած կեր, էնտոր վրեճեն ժողվինք բերինք»։

Թագավոր նոր կը հասկնա, օր ուր բաղճի միջի անմահութենի խնծորի ծառն ա, համա, նա ֆայտա օր կտրեց մեկ հաղ ուր բաղճից, գուս թալեց, ու ամեղ տեղ Սինամահավքին սպանեց»։

«Ի՞նչ խտրպ ցավ տվեց են Սինամահավք ու անմահութենի խնծորի ծառ են թագավորին»։

Էտ թագավոր ըսեց. «Շատ ցավ տվեց»։

«Էլ էտ թագավոր ապրած կէնա, թե օր ձրկան ըսած խոսքի ջուհապ տամ, դու էլ մարդ կսպանիս»։

Թագավոր ըսեց՝ «Սպանիմ, չըսպանիմ, դու պետք ա ձկան ըսած խոսք ընծի մեկնիս»։

Էտ տղեն հ՚ելավ, առավ թագավոր, գնաց աղչկա խաս բաղճեն, թագավորին ըսեց. «Դը խանչա քու աղչկան, թըխ առնի զուր քառսուն ջառեն գա»։ Թագավոր խանչեց ուր աղչկան։ Աղչիկ առավ ղուր հ՚եռսունուին ջառեն, էկավ։ Տղեն ըսեց թագավորի աղչկան. «Հ՚ընչի՞ մեկ հատ պակաս բերիր, քու ջառեք քառսուն հատ են, դու մկա հ՚եռսունուին հատ բերիր»։

Տղեն դառցավ թագավորին ըսեց՝ «Թագավոր ապրած մնա, դու դինա՞ս էտ քու աղչիկ հ՚ընչի դուզեր մարդու սիրտ ու թոր ուտեր»։

— Հընչի՞ գուզեր,— ըսեց թագավոր։

Տըղեն ըսեց—Գողտու բան չը պահվի, ու քու աղչիկ լե սուտ

կուսուտեն առեր էր վրեն, ղբզի կը խափեր։ Գիներ օր, օր մի ուր էրած շնգործութեն այան գելներ, էնաոր համար էր օր ձիավորներ կը ղրվրոնեն ու հ'ըռասա գալոզից կը հարցուցեն. «Ի՞նչ կա, ի՞նչ չկա աշխարհ». որն օր էտ ջուհապ տեր, բռնեն, բերեն օր քու աղջիկ էնտոր սիրտ ու թոք ուտեր։ Օր էկան ընծնե հարցուցին. «Ի՞նչ կա, ի՞նչ չկա աշխարհ», ես ըսի՝ «Ինչ օր կա, ձըր մոտն ա»։ Ընծի բռնին, բերին օր քու աղջիկ իմ սիրտ ու թոք ուտեր, համա աստված ընծի աղատեց։ Ես քըզի նամուսըդ չէնելու համար ուրիշներուն չըսեցի քու աղջկա էրած խափեպահութեն։ Աստված չընդունեց, ձուկ հ'ելավ լիզու, քզի ըսեց. «Էգ լե ուր մոտն ա, որձ լե»։

Տղեն ըսեց. — Դե, զիտա քառսուն աղջիկ տկլոզցուցեք։

Քառսուն աղջիկ լե տկլոզցուցին։ Մեկ տղամարդ դուս էկավ էտոց մեջ։ Թագավոր զարմանք մնաց։

Տղեն գառձավ թագավորին, ըսեց.—«Թագավո՞ր, քու աղջիկ քըզի կը խափեր, որձ ձըկան միս չըր ուտե, օր դու հավատեր, թե քու աղջիկ մաքուր կուս ա, ու քըղնե գոզտու աղջկա խլըղին իտա տղեն ուր մոտ կը պահեր»։

Թագավոր ջատ հավնավ էտ տղին, ուր աղջկան թալեց ծով։

Ու էտ տղեն դառցավ ուր հոր, ըսեց.— Էն աղջկա շնգործութեն օր այան էղավ ուր հոր, ես հ'որի՞ պըտի այան չէղնիմ իմ հորբ Ձեռ թալեց զուր գլխու քաչլիկ գառու փոր վերցուց։ Թագավոր տեսավ օր էտի ուր տղեն ա։ Հ'ելավ վադավ, ուր տղի վզով հ'ընկավ, լացավ, դառցավ հարցուց թագավոր ուր տղից.— Ապա քու աղբրտիք ընծի ըսին թե դև սպանեց մեր աղբոր, մենք լե սպանեցինք դևին, առանք զիտա անմահութենի խնծոր ու զիտա իրեք աղջիկ բերինք. հմալ ա ընծի խափեցի՞ն։

Էտ տեղ տղեն զուր գլխու գալաճաղ հ'ըմեն ըսեց ուր հոր։

Հեր բերեց դևի մոտից բերած աղջկան, աղջիկ լե վազավ տղի վզով հ'ընկավ, սհաթ մի կեր, օր ուրախութենից խելք գացեր էր. ջուր ցանին հ'երեսին, աղջիկ հ'ելավ, նստավ։ Բերեցին տղեն ու աղջիկ վըր հ'իրարու պսակին։ Քառսուն օր, քառսուն գիշեր յոթ ձեռք դհոլ զուռնով հարսնիք էրեցին, պրծան։ Էն մեկել աղբրտանք կամչընեն էտ աղբոր մոտից, հ'երես չիդեն։

Գնաց էնտոնց լե ըսեց.—Աղբրտիք, հ'ընչի՞ չիդաք։ Աֆեր էտ իրեք առակ ես ձըր համար ըսեցի, օր իմ հեր չնեղներ ձըք վրեն, դուք առանց վնասի պրծնեք, ու փա՞ռք աստու պրծաք լե...։